ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ն. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով ծնված սովետական պետությունը մոտ երկու տասնյակ տարի հնարավորություն էր ունեցել զբաղվել խաղաղ պետական և տնտեսական շինարարությամբ, երկրի ժողովուրդների կյանքում կատարելով արմատական սոցիալ-մշակութային վերափոխումներ, կառուցել սոցիալիստական ինդուստրիա ու համայնական գյուղատնտեսություն, ստեղծել ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական նոր մշակույթ, կազմակերպել և կոփել բանակ ու նավատորմ: Սակայն սովետական պետությունը, նրա պաշտպանության համար կազմակերպված զինված ուժերը ոչնչս երիտասարդ էին:

Համաշխարհային իմպերիալիզմի սուսվել ոնակցիոն և ագրեսիվ ուժը՝ հիտլերյան ֆաշիզմը, Եվրոպայի կենտրոնում ստեղծելով բացահայտ տեռորիստական, ռասիստական-շովինիստական դիկտատուրա, նպատակ էր դրել նվաճել ամբողջ աշխարհը և հաստատել ֆաշիզմի համաշխարհային տիրապետություն: Հիտլերյան նացիոնալ-սոցիալիստական կուսակցության պարագլուխները և գերմանական վերմախտի ռազմագետները հասկանում էին, որ իրենց ագրեսիվ ծրագրերի իրականացման հանապարհի գլխավոր արգելքը Սովետական Միությունն է: Ուստի ֆաշիստական ագրեսորները ծրագրել էին ոչնչացնել սովետական պետությունը, նրա բանակը, մեր կոմունիստական կուսակցությունը: Սակայն ֆաշիստական ագրեսորներն սկզբից ևեր հանդգնեցին հարձակվել սովետական Երկրի վրա: Գերմանա-ֆաշիստական զավթիչները նախ օկուպացրին Չեխոսլովակիան ու Ավստրիան, հետո՝ Լեհաստանը, Նորվեգիան, Բելգիան, Հոլանդիան, Դանիան, պարտության մատնեցին ֆրանսիական բանակը, գրավեցին Բալկանյան երկրները: Հիտլերյան Գերմանիան, որ սուաջ էլ հակակոմինտերնական պակտով համագործակցում էր Ճապոնիայի և Իտալիայի ոնակցիոն կառավարությունների հետ, կազմեց պատերազմական բլոկ, որի մեջ միավորվեցին ֆաշիստական Գերմանիան, Իտալիան, Ֆինլանդիայի, Հունգարիայի և Ռումինիայի ոնակցիոն կառավարությունները: Ֆաշիստական զավթիչների այդ բլոկին օգնում էին նաև Ճապոնիան, որն սպառնում էր հեռավորարևելյան սովետական սահմանին և Թուրքիան, որի կառավարությունը 1941 թ. հունիսի 18-ին Հիտլերի հետ կնքեց բարեկամության և փոխադարձ օգնության դաշինք, 26 դիվիզիա կենտրոնացնելով Սովետական Միության հարավային սահմանների մոտ:

Ֆաշիստական Գերմանիայի զինված ուժերի կազմում 1941 թ. հունիսին հաշվվում էր 7,3 միլիոն զինվոր ու սպա, որից 5 միլիոն 500 հազար նետվեց Սովետական Միության վրա, մինչդեռ սովետական զինված ուժերի կազմում կար 4,2 միլիոն մարդ, ըստ որում մեր բանակը տեղադրված էր ամբողջ երկրում՝ Հեռավոր Արևելքից մինչև երկրի արևմտյան սահմանները, հարավի լեռ-

ներից մինչև հյուսիսային ծովերը: Պատերազմի առաջին իսկ օրերին սովետական երկրի վրա հարձակվեցին հիտլերյան Գերմանիայի և նրա դաշնակիցների 4950 մարտական ինքնաթիռ, 2800 տանկ, 48 հազար հրանոթ և ականանետ, որոնց դեմ սովետական բանակը ուներ 1540 ինքնաթիռ, 1800 տանկ և 34695 հրանոթ ու ականանետ[1]: Սովետական պետության արևմտյան սահմանների վրա զրոնեցին հակառակորդի 190 դիվիզիա: Այդպիսի հզոր զինված ուժ կապիտալիստական երկրները չէին ստեղծել իրենց ամբողջ պատմության ընթացքում: Այդ անավոր, սև ուժերը համախմբեց գերմանական ֆաշիզմը, հպատակ ունենալով տապալել միակ սոցիալիստական պետությունը՝ Սովետական Միությունը, ցրել նրա մեջ մտնող սովետական ազգային հանրապետությունները, նրանց ժողովուրդներին կամ ոչնչացնել կամ զրկել իրենց ազգային պետականությունից և հորտացնել:

Ֆաշիստական զավթիչների կողմից Սովետական Միությանը պարտադրված պատերազմը իր բնույթով ամենից առաջ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ պատերազմ էր, զինված բնդհարում մի կողմից սովետական սոցիալիստական և մյուս կողմից՝ իմպերիալիստական պետությունների միջև, նրանց հասարակական ու պետական կարգերի միջև: Սովետական ժողովրդի Հայրենական մեծ պատերազմը նպատակ ուներ պաշտպանել Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները, սոցիալիստական հասարակական և պետական կարգերը, պաշտպանել սովետական հայրենիքի անկախությունը և ազատությունը, պաշտպանել սոցիալիստական իդեալները, ինչպես նաև իրականացնել ազատագրական միսիա այն երկրների ու ժողովուրդների նկատմամբ, որոնք հեծում էին ֆաշիստական լծի տակ: Այստեղից էլ բխում էր Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի ԱՐԴԱՐԱՑԻ, ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ բնույթը, նրա հաղթանակի պատմական նշանակությունը թե՛ մեր երկրի ժողովուրդների և թե՛ ամբողջ մարդկության համար: Պատերազմի փորձը ցույց տվեց սովետական հասարակական և պետական կարգերի գերազանցությունն ու կենսունակությունը, նրանց անհաղթելի ուժը.

Պատերազմի սկզբում սովետական բանակի համար ստեղծված անբարենպաստ պայմանների հետևանքով հակառակորդին հաջողվեց օկուպացնել Եվրոպական տերիտորիա, որտեղ պատերազմից առաջ ապրում էր սովետական երկրի ամբողջ բնակչության 45 տոկոսը և որը տալիս էր արդյունաբերական արտադրանքի 33 տոկոսը, իսկ գյուղատնտեսական արտադրանքի՝ 54 տոկոսը: Ստեղծված ծանր իրադրության մեջ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության առջև ծառայան անհետաձգելի խնդիրներ՝ անհապաղ ռազմական հիմքերով վերակառուցել երկրի ամբողջ էկոնոմիկան, կազմակերպել զենքի արտադրությունը, անմիջապես ստեղծել զորային նոր կազմավորումներ, նրանց համալրել, զինել, հանդերձավորել, կարճ ժամանակում վերացնել թշնամու ռազմական գերակշռությունը և բեկում ստեղծել պատերազմի ընթացքի մեջ հօգուտ Սովետական Միության: Այդ խնդիրների լուծումն իրոք հանդիսացավ մի խիստ քննություն սովետական պետության ու կոմունիստական կուսակցության համար, սոցիալիստական հասարակական ու պետական կարգերի համար, բանվոր դասակարգի և գյուղացիության դա-

[1] «История КПСС, наглядное пособие», вып. 4, М., 1969, էջ 6—7։

շինի համար, սովետական ազգերի եղբայրական միության համար, կարմիր բանակի համար:

Լենինյան կուսակցությունը, որ մեր ժողովրդին հաղթական մարտերի էր առաջնորդել հեղափոխության և քաղաքացիական կռիվների կրակների միջով, կազմակերպել ու գլխավորել էր երկրի ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման և կուլտուրական հեղափոխության հաղթանակները, պատերազմի ժամանակ օգտագործեց այդ նվաճումները՝ ամբողջ երկիրը ռազմական համար դարձնելու, թշնամուն ջախջախելու համար: Կուսակցության Կենտկոմը, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը և Ժողկոմսովետը վերակառուցեցին իրենց գործունեությունը: Ստեղծվեց Պաշտպանության Պետական Կոմիտե, որի ձեռքում կենտրոնացվեց ամբողջ իշխանությունը: Սովետական երկիրն ուներ անհամար նյութական և մարդկային ռեզերվներ, հնարավորություններ, պահեստային ուժեր: Խնդիրն այն էր, որ արագ կերպով մոբիլիզացվեին այդ հնարավորությունները և ի սպաս դրվեին հայրենիքի պաշտպանությանը: Այդ խնդիրները հաջող լուծվեցին սովետական հասարակական ու պետական կարգերի ընձեռած հնարավորությունների և կոմունիստական կուսակցության ղեկավարող, կազմակերպող դերի իրականացման շնորհիվ:

1941 թ. հուլիս-դեկտեմբերին բանակ մոբիլիզացվեցին 1890—1921 թթ. ծնված զինապարտները: Այդ 6 ամիսների ընթացքում սովետական երկրում նոր կազմավորվեց 262 հրաձգային դիվիզիա, 159 հրաձգային բրիգադա, 76 տանկային բրիգադա և 100 առանձին տանկային գումարտակ[2]: Վերոհիշյալ բոլոր զորամիավորումները հիմնականում կազմված էին ռուս մարտիկներից ու սպաներից: Նոր կազմավորված և ռազմանակատ ուղարկված դիվիզիաներից ու բրիգադաներից 80-ը համալրվել էին Ղազախստանի, Ուզբեկստանի, Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Կիրգիզիայի և Մերձբալթյան սովետական հանրապետությունների մարդկային և նյութատեխնիկական ռեզերվներից[3]: Կարմիր բանակի զինվորական ստորաբաժանումներում սովորում էին 42 ազգերի ներկայացուցիչներ: Սովետական Միության հերոսների թվում կային մոտ 100 ազգերի զավակներ: Մոսկվայի պաշտպանության մարտերում, Ստալինգրադի հակատամարտում, Կովկասի նախալեռներում, Նովոռոսիյսկի, Կերչի, Սևաստոպոլի ազատագրման համար մղված հերոսամարտերում, Մերձբալթիկայում և Ուկրաինայում հերոսական շատ էջեր գրեցին սովետական հանրապետությունների ազգային զորային կազմավորումները: Սովետական բոլոր հանրապետություններն անում էին առավելագույնը՝ սովետական զինված ուժերը համալրելու, նրանց մարտական հզորությունը բարձրացնելու, հակառակորդի բանակների բանակական գերակշռությունը վերացնելու համար:

Նույնը պետք է ասել նաև զենքի և զինամթերքի, հանդերձանքի և պարենային մթերքների արտադրանքի և ռազմանակատի պահանջները բավարարելիս. նոյեմբերին թշնամու հարձակմանը ենթակա մարզերից երկրի արևել-

---

2 Տե՛ս Л. А. Жилин, Усилия народов СССР в достижении победы во второй мировой войне (Доклад на международном конгрессе исторических наук). М., 1970, էջ 4—5։

3 «Коммунист» (ամսագիր), 1972, № 13, էջ 81։

ման շրջանները էվակուացվեցին մինչև 10 միլիոն բնակչություն և մոտ 1500 խոշոր արտադրական ձեռնարկություն: Հաջորդ կես տարում էվակուացված բնակչության թիվը հասավ մոտ 20 միլիոնի: Սովետական երկրի ռազմական արտադրությունը մեծ կորուստներ ունեցավ: Եթե 1940 թ. ՍՍՀՄ-ում ձուլվել էր 18 միլիոն տոննա պողպատ և հանվել էր 154 միլիոն տոննա ածուխ, ապա 1942 թ.՝ 8 միլիոն տոննա պողպատ և 63 միլիոն տոննա ածուխ, 1944-ին պողպատի ձուլումը հասավ 11 միլիոն տոննայի, ածխի հանույթը՝ 99 միլիոն տոննայի[4]:

Ռազմական արտադրանքի ծավալը զգալի չափերով մեծացնելու համար մշակվեց ՍՍՀՄ ռազմական-ժողովրդատնտեսական մոբիլիզացիոն պլան, գործի դրվեցին սոցիալիստական արտադրանքակի բոլոր առավելությունները, բանվոր դասակարգի, գյուղացիության, գիտատեխնիկական ինտելիգենցիայի բոլոր ուժերը: Երկրի արևելյան, թիկունքային շրջաններում 1942—1945 թթ. ընթացքում կառուցվեց 10 հազարից ավելի արդյունաբերական ձեռնարկություն. ռազմական արդյունաբերության արտադրանքը, 1941 թ. համեմատությամբ, 1944 թ. ավելացավ 3,6 անգամ[5]: Սովետական Միությունը պատերազմի տարիներին արտադրեց 136800 մարտական ինքնաթիռ (Գերմանիան իր դաշնակիցների հետ միասին՝ 78900), մոտ 102 հազար տանկ և ինքնագնաց հրետանային սարք (Գերմանիան՝ 53800), 489900 տարբեր տրամաչափի հրանոթ (Գերմանիան՝ 102100), 347900 ականանետ (Գերմանիան՝ 6800): Սովետական ռազմական արդյունաբերության արտադրանքը տարեցտարի ավելանում էր, իսկ ֆաշիստական բլոկինը՝ կրճատվում: Սովետական Միության ռազմական արդյունաբերության ձեռնարկությունների բանվորները աշխատում էին ուժերի գերագույն լարումով, հայրենասիրական շահանված տոգորվածությամբ: Ռազմանակատ մեկնածներին փոխարինում էին երիտասարդները ու կանայք: Բանվոր դասակարգի հետ միասնական, միաձուլ գործում էին սոցիալիստական գյուղի աշխատավորները: 1941—1945 թթ. մթերվեց 4 միլիարդ 312 միլիոն փուդ հացահատիկ (առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ռուսաստանում մթերվել էր 1 միլիարդ 399 միլիոն փուդ հացահատիկ): Սոցիալիստական գյուղատնտեսությունը, չնայած իր ունեցած վիթխարի կորուստներին, 1941—1945 թթ. արտադրեց այնքան հացահատիկ և այլ գյուղատնտեսական մթերքներ, որոնք պետության ունեցած ռեզերվների հետ միասին ապահովեցին բանակի և թիկունքի բոլոր պահանջները:

Պատերազմի տարիներին ֆաշիստական Գերմանիայում և նրա դաշնակից Երկրներում հետզհետե ավելի ու ավելի էին սրվում դասակարգային հակասությունները, ազգամիջյան հարաբերությունները, սոցիալական անտագոնիզմը. Հիտլերյան «նոր կարգը» թեև հաստատել էր սպանությունների, դաժան տեռորի և բռնությունների ռեժիմ, բայց ֆաշիստական բանակի թիկունքում ծավալվում էր դիմադրական շարժումը: Օկուպացված երկրների հայրենասերները զենքը ձեռքին պայքարում էին ֆաշիստների դեմ: ՍՍՀՄ օկուպացված շրջաններում բորբոքվում էր պարտիզանական պատերազմը: Դրությունը կա-

---

[4] Տե՛ս П. Н. Поспелов, Исторические итоги и уроки Великой отечественной войны, М., 1965, էջ 17—18։

[5] «История КПСС», М., 1974, էջ 494։

յուն չէր նաև բուն Գերմանիայում. իրենք՝ գերմանացի պատմաբաններ հրապարակել են շատ նյութեր այն մասին, թե ինչպես գերմանական բանվոր դասակարգի հիմնական ուժերը «տոտալ մոբիլիզացիայի» միջոցով ուղարկվել էին ռազմաճակատ, իսկ երկրի արդյունաբերության մեջ հարկադիր աշխատանքի էին հշել մոտ 14 միլիոն օտարերկրացի բանվորների, ռազմագերիների ու բանտարկյալների, ըստ որում, օտարերկրացիների 40 տոկոսը սովետական մարդիկ էին, 25 տոկոսը՝ ֆրանսիացիներ, 15 տոկոսը՝ լեհեր և այլն[6]: Գերմանացի գիտնականները հաստատել են, որ այդ բանվորների գույց տված մասսայական դիմադրությունը սովորական երևույթ է եղել: Այսպես, միայն 1944 թ. հունվարին արտադրությունը լքել և գաղտնի փախուստի է դիմել 40 հազար բանվոր: Հաջորդ ամիսներին դասալքությունը հասել է ավելի մեծ չափերի: Դուրս էին հազարավոր դատարաններ, որոնք պատժում էին արտադրությունը լքողներին, սակայն ապարդյուն. ֆաշիստական տեռորը չէր ապահովում ռազմական արտադրանքի պահանջները:

Սովետական բանակի մղած պաշտպանական մարտերի ժամանակ՝ Բրեստի ամրոցում և Օդեսայում, Սմոլենսկի շրջանում և Կիևում, Սևաստոպոլում և Կերչում, Լենինգրադում և Կիևում, Մոսկվայի համար մղված մեծ ճակատամարտում չափազանցվեցին գերմանա-ֆաշիստական բանակի ընտիր դիվիզիաները: Ձախողվեցին թշնամու ռազմա-ստրատեգիական ծրագրերը: Ստալինգրադի ճակատամարտի օրերին սովետական ժողովուրդը թշնամու մեկ միլիոն 11 հազար զինվորի դիմաց կենտրոնացրեց կարմիր բանակի մեկ միլիոնից ավելի զինվոր, 675 տանկի դիմաց նետեց 894 տանկ, 1290 հրանոթի և ականանետի դիմաց՝ 13547 հրանոթ և ականանետ, 1216 մարտական ինքնաթիռի դիմաց՝ 1115 ինքնաթիռ: Կես տարի հետո, Կուրսկի մեծ ճակատամարտի ժամանակ Օրյոլի շրջանում գերմանա-ֆաշիստական 600 հազար զինվորի ու սպայի դիմաց կարմիր բանակը մարտի մեջ մտցրեց 1 միլիոն 286 հազար զինվոր ու սպա, 7 հազար հրանոթի և ականանետի դիմաց՝ 21 հազար հրանոթ և ականանետ, 1200 տանկի և ինքնագնաց սարքի դիմաց՝ 2400 տանկ և ինքնագնաց սարք, 1000 մարտական ինքնաթիռի դիմաց՝ 1300 մարտական ինքնաթիռ[7]:

Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտերը արմատական շրջադարձ հանդիսացան պատերազմի ընթացքում: Սովետական բանակը իսորտակեց ֆաշիստական բանակի հզորությունը: Հիտլերի և նրա դաշնակիցների ռազմաչխարհակալ հորդաները վտարվեցին սովետական երկրից, նրա պետական սահմանները լիովին վերականգնվեցին: Ազատագրելով սոցիալիստական հայրենիքը, սովետական զինված ուժերը ավարտված չհամարեցին իրենց պատմական խնդիրը: Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մարտական առաջադրանք տվեցին սովետական զինված ուժերին՝ շարունակել ֆաշիստական զավթիչների հետապնդումն ու լիակատար չախջա-

---

6 *Տե՛ս* К. Дробиш, Д. Айххольц. Использование принудительного труда иностранных рабочих в Германии во время второй мировой войны (доклад на международном конгрессе исторических наук). М., 1970. *էջ 13:*

7 *Համեմատական տվյալները բերվում են ըստ ՍՍՀՄ Մինիստրների սովետին կից քարտեզագրության և գեոդեզիայի գլխավոր վարչության հրատարակած* «Сталинградская битва» *և* «Курская битва» (М., 1973) *քարտեզ-սխեմաների:*

խումբ, օգնություն ցույց տալ հիտլերյան օկուպանտների լծի տակ հեծող եվրոպական ժողովուրդներին:

Սովետական բանակը կատարեց իր այդ առաքելությունը ևս: Մարտերը փոխադրվեցին Բելոյի շրջանը, որը պաշտպանելու համար գործում էին մեկ միլիոն զինվոր, 10400 հրանոթ և ականանետ, 1500 տանկ, 3300 մարտական ինքնաթիռ: Բելոյին գրավելու համար մղված մարտերին մասնակցում էին սովետական 2,5 միլիոն զինվոր՝ 41 հազար հրանոթով և ականանետով, 6250 տանկով և ինքնագնաց հրետանային սարքերով, 7500 մարտական ինքնաթիռով[8]: Բելոյինում տեղի ունեցած հաղթական ճակատամարտում գերմանական իմպերիալիզմի բանակը ոչնչացվեց: Հիտլերյան ֆաշիստական պետությունը 1945 թ. մայիսի 8-ին կապիտուլյացիայի ենթարկվեց: Սովետական զինվորը հաղթանակի դրոշ բարձրացրեց Ռայխստագի վրա: Մայիսի 9-ը մտավ պատմության մեջ որպես Հաղթանակի օր:

Սովետական բանակը կարճ ժամանակամիջոցում պարտության մատնեց նաև ճապոնական իմպերիալիզմին՝ Սովետական Միության և Ասիայի բոլոր ժողովուրդների այդ ջախջախումն, ոչնչացրեց հրա Կվանտունգյան բանակը: Լիկվիդացվեց նաև պատերազմի արևելյան օջախը:

Ֆաշիզմի դեմ մղած իր բառապես հերոսական պայքարում սովետական ժողովուրդը մենակ չէր: Հիտլերյան Գերմանիայի և նրա սատելիտների դեմ համախմբվեց հակահիտլերյան կոալիցիան, որի մեջ մտնող երկրների համագործակցությունը հսկայական քաղաքական, ռազմա-ստրատեգիական և բարոյական ազդեցություն ունեցավ պատերազմի ընթացքի վրա: Ամերիկայի Միացյալ Նահանգները և Անգլիան դաշնակցային պարտավորություններով զգալի օգնություն ցույց տվեցին Սովետական Միությանը՝ տրամադրելով մեքենաներ, սարքավորում, զենքի և հանդերձանքի որոշ տեսակներ: 1944 թ. հունիսին անգլո-ամերիկյան զինված ուժերը դեսանտ հանեցին հյուսիսային Ֆրանսիայում և բացեցին երկրորդ ռազմանակատը ընդդեմ ֆաշիստական Գերմանիայի, հարկադրելով հիտլերյան բանակներին պատերազմ մղել նաև արևմտյան հակատում: Սակայն պատերազմի սկզբից մինչև հաղթանակի օրը սովետական բանակն էր հանդիսանում այն վճռական ուժը, որ պարտության մատնեց գերմանական իմպերիալիզմի զինված հորդաներին: Սովետական ռազմահակատում կարմիր բանակը ոչնչացրեց հիտլերյան 507 դիվիզիա և Գերմանիայի դաշնակիցների մոտ 100 դիվիզիա, մինչդեռ դաշնակիցների բանակների դեմ մղած մարտերում գերմանական բանակը կորցրեց ընդամենը 176 դիվիզիա: Ֆաշիստական Գերմանիայի զինված ուժերը ունեցան 13,6 միլիոն մարդկային կորուստ, որից 10 միլիոնը սովետա-գերմանական ռազմահակատում[9]: Պատմության էջերում գրված են ԱՄՆ-ի պրեզիդենտ Ֆ. Ռուզվելտի խոսքերն այն մասին, որ Ստալինգրադի պաշտպանները իրենց ոգու տոկունությամբ, ինքնազոհությամբ և քաջագործություններով «հավերժ կոգեշնչեն բոլոր ազատասեր մարդկանց սրտերը», որ «նրանց փառապանծ հաղ-

---

[8] «Великая отечественная война Советского Союза 1941—1945. Краткая история», М., 1965, էջ 484, 487։

[9] П. Н. Федосеев. Всемирно-историческое значение победы советского народа в Великой отечественной войне, М., 1971, էջ 246։

բանակը կանգնեցրեց արշավանքի ալիքը և դարձավ շրջադարձային կետ դաշնակից ազգերի պատերազմում ընդդեմ ագրեսիայի ուժերի»[10]:

Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի հաղթանակը պատմական մեծ նշանակություն ունեցավ մեր սոցիալիստական հայրենիքի հետագա զարգացման, ինչպես նաև ամբողջ աշխարհի ժողովուրդների համաշխարհային պատմության ընթացքի վրա: Նա ցույց տվեց սովետական սոցիալիստական հասարակարգի անպարտելի ուժը և կենսունակությունը.

Անդրադառնալով մեծ հաղթանակի միջազգային նշանակությանը, անհրաժեշտ է ընդգծել, որ Սովետական Միության զինված ուժերը, պաշտպանելով Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո մեր երկրի ձեռք բերած մեծագույն նվաճումները, միաժամանակ վճռական դեր կատարեցին Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Ռումինիայի, Բուլգարիայի, Հունգարիայի, Հարավսլավիայի, Ալբանիայի, Ավստրիայի, Նորվեգիայի, Չինաստանի, Կորեայի ժողովուրդներին օկուպացիոն ռեժիմից ազատագրելու գործում: Սովետական Միության սահմանների մոտ բուրժուական պետությունների փոխարեն ձևավորվեցին սոցիալիստական պետություններ: Մինչև պատերազմը աշխարհում միակ սոցիալիստական երկրի կապիտալիստական շրջապատը ընդմիջեց, ստեղծվեց սոցիալիստական լագեր, սոցիալիզմի համաշխարհային սիստեմ: Սովետական ժողովրդի հեղափոխական-վերափոխիչ գործունեության շնորհիվ մեր երկրում սոցիալիզմի հաղթանակը դարձավ վերջնական ու անդառնալի: Սա է Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի գլխավոր հանրագումարներից մեկը:

Սովետական Միության հաղթանակը կարևոր պատմական նշանակություն ունեցավ նաև մեր երկրի բազմազգ ժողովուրդների բարեկամության, նրանց մարտական համագործակցության տեսակետից: Սովետական Միության ավելի քան 100 ազգերն ու ազգությունները դիմացան պատերազմի դաժան փորձություններին, հավատարիմ մնացին սովետական ընդհանուր հայրենիքին և ժողովուրդների եղբայրության ուխտին: Սովետական երկրի բոլոր ազգերն ու ազգությունները, համախմբված ռուս մեծ ժողովրդի շուրջը, նրա հետ մարտական համագործակցությամբ ռազմանակատում և թիկունքում կատարեցին անձնախնայաց սխրագործություններ, իրենց արժանի ավանդը ներդրեցին ֆաշիզմի ջախջախման պայքարում: Հայրենական մեծ պատերազմի ճակատներում մղված պայքարում աչքի ընկնելու համար կառավարական շքանշանների արժանացան 5 միլիոն 300 հազար մարդ, իսկ մեդալների՝ 7 միլիոն 580 հազար մարդ: Սովետական Միության հերոսի կոչում շնորհվեց 11 հազար 500 մարդու, որոնց շարքում կային ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, թաթարներ, հրեաներ, հայեր, ղազախներ, վրացիներ, ուզբեկներ, մորդվաներ, չուվաշներ, ադրբեջանցիներ, բաշկիրներ, օսեր, թուրքմեններ, լիտվացիներ, տաջիկներ, կիրգիզներ, լատիշներ, էստոնացիներ, կարելներ, կալմիկներ, ադիգեյցիներ, կաբարդիներ, աբխազներ, մոլդավացիներ, յակուտներ, տուվացիներ և այլն: Բազմազգ էր նաև շքանշաններով ու մեդալներով պարգևատրվածների կազմը, սովետական տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներից էին նաև մեր անվանի զորապետները ու բաղաշխատողները: Ճիշտ նույն

---

10 «Правда», 16 հոկտեմբերի, 1967։

ձևով էլ սովետական բոլոր ազգերն իրենց մասնակցությունն ունեցան կարմիր բանակին զենքով ու ռազմամթերքով, հանդերձանքով ու զինամթերքով մատակարարելու գործում:

Հանելի է ընդգծել այն իրողությունը, որ հայ ժողովուրդը, որ շատ է տեսել պատերազմ և գաղթ, գենոցիդ և կողոպուտ, ունենալով մարդկային և նյութական անհամար կորուստներ, 1941 թ. հունիսի 22-ից ոտքի կանգնեց և արտահայտեց իր վճռական կամքը՝ մինչև վերջ հավատարիմ լինել սովետական ժողովուրդների եղբայրության դաշինքին: Կես միլիոն հայ զինվոր[11] մտավ սովետական բանակի շարքերը: ՍՄԿԿ Կենտկոմը և ՍՍՀՄ կառավարությունը գնահատելով հայ ժողովրդի ունեցած մասնակցությունը մեծ հաղթանակը նվաճելու գործում, 1945 թ. նշել են. «Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ ժողովուրդը պատվով կատարեց իր պարտքը Հայրենիքի հանդեպ: Հայ ռազմիկները Սովետական Միության մյուս ժողովուրդների զավակների հետ միասին անձնվիրաբար պաշտպանում էին մեր հայրենիքի ազատությունն ու անկախությունը: Հայաստանի բանվորները, կոլտնտեսականները և ինտելիգենցիան անդուլ կերպով աշխատում էին թշնամու դեմ հաղթանակ նվաճելու համար»[12]:

Հայ ժողովրդի ինտերնացիոնալիստական և սովետական հայրենասիրական դիմագծի մասին խոսելով, ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևը տվել է հետևյալ բնութագիրը. «Ինձ վիճակվեց Հայրենական մեծ պատերազմի օրերին ճանաչել մեր սովետական հայրենիքին, սոցիալիզմի ու կոմունիզմի գործին անսահմանորեն նվիրված հայ ժողովրդի բազում քաջարի, խիզախ զավակներին: Նրանք մարտիկներ էին, սպաներ, գեներալներ, մարտական բարեկամությունը առանձնահատուկ բարեկամություն է: Դա հնարավորություն է ընձեռում կարճ ժամանակամիջոցում ճանաչել մարդու հոգին: Եվ այն ժամանակ, դաժան հակատամարտերի օրերին ես ճանաչեցի հայ ժողովրդի սքանչելի հոգին»[13]:

Պատմական մեծ հաղթանակի օրերից անցել է 30 տարի: Սովետական երկիրը անշեղ կերպով առաջ է ընթանում կոմունիստական շինարարության ուղիով, պայքար մղելով սոցիալիզմի, դեմոկրատիայի և խաղաղության համար: Սովետական Միության լենինյան արտաքին քաղաքականությունը լայն աջակցություն է ստանում աշխարհի բոլոր ազատասեր ուժերի կողմից. Աշխարհի քաղաքական ուժերի հարաբերակցությունը ավելի ու ավելի է փոխվում հօգուտ սոցիալիզմի: Ավելի են ամրապնդվում Սովետական Միության միջազգային դիրքերը:

Սովետական մարդիկ, որ այդքան արյուն թափեցին հաղթանակի համար և այդքան նյութական զոհողություններ կրեցին, հաշվի են առնում միջազգային կյանքում կատարվող իրադարձությունները և անում են ամեն ինչ, որպեսզի օրըստօրե ամրապնդվեն կոմունիստական հասարակարգ կառուցող Սովետական Միությունը և սոցիալիզմի ողջ լագերը:

---

11 Տե՛ս «Սովետական Հայաստանի 50 տարին», Երևան, 1972, էջ 53:

12 «Правда», 23 նոյեմբերի, 1945:

13 Լ. Ի. Բրեժնև, Սովետական Հայաստանի 50 տարին, Երևան, 1970, էջ 53—54: